



**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

**Յուլիս 2023 - Յունիս 2025**

**ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**Ներկայացուած՝**

**ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 27-րդ եւ ՀՕՄ-ի 103-րդ Պատգամաւորական Ժողովին  
27, 28 եւ 29 Յունիս 2025**

**ՄՈՆԹՐԷԱԼ**

# ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

## Երկամեայ Ամփոփ Տեղեկագիր 2023 – 2025

---

### ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

#### Ժողովներ - Շրջանային Վարչություն

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչության 2023-2025 տարեշրջանի առաջին ժողովը տեղի ունեցավ Կիրակի, 2 Յուլիս, 2023-ին, շրջանի 26-րդ Պատգամաւորական Ժողովի աւարտին, Մոնթրեալի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահին մէջ, ներկայութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչության շրջանաւարտ եւ նորընտիր կազմին եւ 26-րդ Պատգամաւորական Ժողովի դիւանին (ատենապետներ՝ ընկհ. Անի Օհանեան եւ ընկհ. Վարդուկ Պարտազճեան, ատենադպիրներ՝ ընկհ. Զեփիւռ Խաչատուրեան եւ Վարդի Դանիէլեան): Ներկայ էր ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եւ Գանատայի շրջանի ներկայացուցիչ՝ ընկերուհի Արմինէ Կարապետեան:

Ժողովը միաձայնութեամբ կատարեց վարչական պաշտօններու բաժանումը հետեւեալ ձեւով:

Ատենապետ՝ ընկհ. Լուսին Փալանճեան	Մոնթրեալ
Փոխ-ատենապետ՝ ընկհ. Յասմիկ Բաբիսեան	Թորոնթօ
Ատենադպիր՝ ընկհ. Արփի Սանոսեան	Մոնթրեալ
Հաշուապահ՝ ընկհ. Աստղիկ Խաչընձեան	Լաւալ
Գանձապահ՝ ընկհ. Քրիստին Աֆարեան	Լաւալ
Խորհրդական՝ ընկհ. Մարալ Միսիրեան	Թորոնթօ
Խորհրդական՝ ընկհ. Վալերին Յարութիւնեան	Մոնթրեալ

31 Օգոստոս, 2024-ին կայացած լիագումար ժողովին, ընկհ. Յասմիկ Բաբիսեան անձնական պատճառներով հրաժարեցաւ իր վարչական պաշտօնէն եւ զինք փոխարինեց ընկհ. Վարդուկ Պարտազճեան:

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

2 Յուլիս, 2023-25 Յունիս, 2025, երկամեայ շրջանի պաշտօնավարության ընթացքին, Շրջանային Վարչությունս գումարեց 45 ժողովներ, 2 լիագումարներ, 2 միջ-վարչական հանդիպումներ եւ 2 առցանց հանդիպումներ Կեդրոնական Վարչության հետ: Եղան նաեւ շաբաթական դրութեամբ բազմաթիւ աշխատանքային օրեր: ՀՕՄ-ի Կեդրոնական վարչության շրջանիս ներկայացուցիչ՝ ընկհ. Արմինէ Կարապետեան յաճախ ներկայ գտնուեցաւ ժողովներուն, հանդիպումներուն, սեմինարին եւ միջ-վարչական ժողովներուն:

Վարչությունս բժախնդրութեամբ քննեց իւրաքանչիւր հարց, իրականացած աշխատանք, յատկապէս 26-րդ Պատգամաւորական ժողովին որդեգրուած ծրագիրներու կիրարկման վերաբերող հարցեր եւ կայացուց որոշումներ:

## Ներկայացուցչական Դրութիւն

Մասնաճիւղերու հետ մնայուն կապ պահելու, աշխատանքները հետապնդելու, ուղղութիւն տալու եւ խորհրդակցելու միտումով, վարչությունս հետեւեալ ներկայացուցիչները նշանակեց մասնաճիւղերու մօտ:

Ընկհ. Մարալ Միսիրեան	Թորոնթօ «Ռուբինա»
	Գէմպրիճ «Մեդրի
Ընկհ. Վարդուկ Պարտազճեան*	Համըլթըն «Արեւ»
	Միսիսոկա «Առագաստ»
	Սէնթ Գաթրինգ «Արագ»
	Ուինծըր «Ռուբինա»
Ընկհ. Վալերին Յարութիւնեան	Մոնթրէալ «Սօսէ»
Ընկհ. Աստղիկ Խաշընճեան	Լաւալ «Շուշի»
Ընկհ. Լուսին Փալանճեան	Վանգուվըր «Արագ»
Ընկհ. Քրիստին Աֆարեան	Օթթաուա «Սեւան»

\*4 Յուլիս, 2023-էն, մինչեւ 1 Սեպտեմբեր, 2024, ընկի. Յասմիկ Բաբիսեան հանդիսացաւ Համիլթընի «Արեւ», Սէնթ Գաթրինգի «Արագ» եւ Միսիսոկայի «Առագաստ» մասնաճիւղերու ներկայացուցիչը:

Բոլոր ներկայացուցիչները հետեւողականօրէն կապի մէջ մնացին մասնաճիւղերու վարչութիւններուն հետ, ըստ հարկին ուղղութիւն տալու վարչական գործելակերպի մասին եւ դժուարութիւնները միասնաբար լուծելու:

### **Մասնաճիւղերու Այցելութիւններ**

Երկամեայ գործունէութեան շրջանին Շրջանային Վարչութիւնս մասնաճիւղերու այցելութիւններ կատարեց իր լրիւ կազմով տարեկան դրութեամբ: Այցելութիւնները տեղի ունեցան մասնաճիւղերու վարչական եւ երբեմն անդամական ժողովներուն, ուր արծարծուեցան իւրաքանչիւր մասնաճիւղի գործունէութիւնը, մտահոգութիւններն ու դժուարութիւնները, անդամական վիճակը, ՀՕՄ-ի քարոզչական աշխատանքի կարեւորութիւնը, վարչութիւններու նիւթական պարտաւորութիւնները, վարչական անդամ գտնելու դժուարութիւնը եւ երիտասարդ ուժեր ներգրաւելու կարեւորութիւնը: Այցելութիւններու ընթացքին ներկայացուեցան նաեւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային եւ Կեդրոնական Վարչութեանց ընթացիկ ծրագիրները:

Այցելութեան ընթացքին գնահատուեցան մասնաճիւղերուն տարած ժրաջան աշխատանքները եւ արձանագրած յաջողութիւնները:

### **Միացեալ Ժողովներ**

7 Նոյեմբեր, 2023-ին եւ 5 Նոյեմբեր, 2024-ին միացեալ ժողովներ գումարուեցան Մոնթրէալի Հայ կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահէն ներս մասնակցութեամբ՝ Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղերուն: Ժողովին փոխանցուեցան Շրջ. Վարչութեան տարեկան ծրագիրները, երկու մասնաճիւղերուն ամսական զեկոյցները, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան 73-րդ Համահայկական Պատգամաւորական ժողովի ամփոփ զեկոյցը: Սոյն ժողովներուն ընթացքին կրթաթոշակներու տուչութիւն կատարուեցաւ:

## **Միջ-Վարչական Ժողով**

30 Սեպտեմբեր, 2023-ին, առցանց գումարուեցաւ առաջին միջ-վարչական ժողովը, Շրջանային վարչութեան լրիւ կազմի եւ շրջանիս 8 մասնաճիւղերէն 36 վարչական ընկերուհիներու ներկայութեամբ: Ներկայ էր Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ ընկի. Արմինէ Կարապետեան: Սոյն ժողովին ներկայացուեցան Շրջանային վարչութեան եւ Կեդրոնական վարչութեան առաջնահերթ ծրագիրները, ինչպէս նաեւ մասնաճիւղերու գործունէութիւնները:

27 Յունուար, 2025-ին, միջ-Վարչական երկրորդ ժողովը առցանց գումարուեցաւ, ներկայութեամբ՝ մասնաճիւղերու 35 վարչականներու, Շրջանային վարչութեան լրիւ կազմին եւ ՀՕՄ-ի 35-ամեակի Մայր յանձնախումբին: Ժողովին ներկայացուեցան Շրջանային վարչութեան գործունէութիւնը եւ ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 35-ամեակի տօնակատարութեան նախագիծն ու հանգանակային ձեռնարկի մանրամասնութիւնները:

Սոյն ժողովի ընթացքին վարչութիւնները ընդառաջեցին Շրջանային Վարչութեանս կողմէ կատարուած առաջարկին, ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 35-ամեակի առթիւ 35,000 \$ բացառիկ յատկացում մը կատարելու:

## **Յարաբերական**

Շրջանային վարչութիւնը ներկայ գտնուեցաւ մասնաճիւղերու անդամական ժողովներուն, ամեակներուն, ձեռնարկներուն, տարեկան մեծ ու փոքր տօնավաճառներու բացման հանդիսութեանց, ամենօրեայ ու միօրեայ դպրոցներու, ճամբարներու եւ Ծաղկոցի հանդէսներուն:

ՀՕՄ-ի զանազան ձեռնարկներու կողքին, վարչութեանս անդամները ընդառաջեցին ստացուած հրաւերներուն եւ ներկայ եղան քոյր կազմակերպութիւններու եւ պատկան մարմիններու ժողովրդային հաւաքներուն, ճաշկերոյթներուն, տոդանցքներուն, ժողովներուն, հրապարակային զրոյցներուն եւ տօնակատարութեանց:

Ինչպէս միշտ, վարչութիւնս շարունակեց սերտօրէն գործակցիլ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի, Հայ Դատի գրասենեակի եւ յարակից Շրջանային մարմիններու, ինչպէս նաեւ տեղական կազմակերպութիւններու եւ միութիւններու հետ:

## **ՀՕՄ-ի Ննջեցեալներու Հոգեհանգիստ**

Վարչութեանս խնդրանքով, Գանաստայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեանի կոչը ուղղուեցաւ Գանաստայի Կիլիկիոյ Թեմի Առաքելական բոլոր եկեղեցիներուն: 25 Փետրուար, 2024-ին եւ 23 Փետրուար, 2025-ին յաւարտ Սուրբ պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ՀՕՄ-ի շարքերէն առ յաւէտ բաժնուած ընկերուհիներու ու բարերարներու յիշատակին թեմիս գրեթէ բոլոր եկեղեցիներէն ներս:

## Առցանց Նուիրատուութիւն

Վարչութիւնս շարունակեց գործակցիլ CanadaHelps բարեգործական կազմակերպութեան հետ, որուն տրամադրած հարթակը օգտագործելով, մեր կայքէջի միջոցաւ նուիրատուութիւններ ստացանք:

Կ'արժէ նշել այստեղ, թէ անցնող տարիներու ընթացքին այս հարթակին միջոցաւ եղած նուիրատուութիւնները

կրկնապատկուեցան: Առ ի գիտութիւն բոլորին նշենք, որ նուիրատուութիւններէն գոյացած ընդհանուր գումարի 3.75% կը զեղջուի CanadaHelps կազմակերպութեան կողմէ, որպէս գրասենեակային ծախս:

Վարչութիւնս այս շրջանին նաեւ օգտագործեց E-transfer, EFT, PayPal/Facebook/Instagram, Benevity եւ Stripe արդիական էլեկտրոնային միջոցները, նուիրատուութիւններ կամ վճարումներ ստանալու համար:

## Անդամական Շտեմարան - Database

Անդամական շտեմարանի մասնաճիւղերու պատասխանատուները վարչութեանս կապին՝ ընկհ.Մարալ Միսիրեանի ներկայութեամբ, հանդիպումներ ունեցան **Bytech** ընկերութեան սեփականատէր Պրն. Վարուժ Միրզանեանցի հետ:

Մասնակիցները առիթ ունեցան սպառիչ պատասխաններ ունենալու զիրենք մտահոգող բոլոր հարցերուն մասին: Այս աշխատանքը հասած է իր երրորդ փուլին, այսինքն՝ յանձնախումբերու անդամներու անուանացանկի պատրաստութեան բաժնին:

## Կանոնագիր

Կանոնագրի յանձնախումբը ՀՕՄ-ի 26-րդ Պատգամաւորական ժողովին կողմէ վաւերացուած բոլոր բարեփոխումները կատարեց: Նոր կանոնագիրքը տպուեցաւ Հորիզոնի աշխատակից՝ տիկ.Սոնա Թիթիզեանի սիրայօժար օժանդակութեամբ: Վարչութիւնս որոշ տպաքանակ մը բաժնեց մասնաճիւղերուն եւ ե-նամակով յղեց անոր թուայնացած օրինակը: Ներկայիս կանոնագրի անգլերէն լեզուի թարգմանական աշխատանքը ընթացքի մէջ է:

Կ'արժե այստեղ նշել, որ նոր կանոնագիրքի տպագրությունը սիրայօժար կատարեց պրն. Բաֆֆի Ստեփանեան(Թորոնթոյէն):

## Ուղեցոյց

2023-ին կազմուած էր ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան Ուղեցոյցի յանձնախումբը, գոր մշակեց՝ ՀՕՄ-ի Գանատայի շրջանի ընդհանուր գործունէութեան ուղեցոյցը:

Յանձնախումբը ժողովները գումարեց առցանց: Աշխատանքը սկսաւ Մարտէն մինչեւ Յունիս, 2023: Այնուհետեւ, որոշ ընդհատումէ ետք յանձնախումբը շարունակեց ուղեցոյցին մշակման աշխատանքը Մայիս 2024-էն սկսեալ եւ ամբողջացուց զայն Ապրիլ 2025-ին: ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ուղեցոյցը կ'ընդգրկէ շրջանիս կառոյցին եւ գործունէութեան ընդհանուր պատկերը, որդեգրուած սկզբունքները եւ աշխատանքային դաշտն ու ծրագիրները: Այս ուղեցոյցը մշակուած է հիմնուելով՝ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախորդ տարեշրջաններու տեղեկագրերու տուեալներուն վրայ:

Շրջանային վարչութեան ներդրումով կազմուեցաւ նորագիր անդամի ուղեցոյցը եւ խնդրուեցաւ մասնաճիւղերու վարչութիւններէն նորագիրներու յատուկ դաստիարակչական միջոցառում մը կազմակերպել, որուն ընթացքին թղթածրարի բովանդակութիւնը ներկայացնել:

Այսպիսով, երեք տարուան աշխատանքէ մը ետք, Ուղեցոյցի յանձնախումբը ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 25-րդ Պատգամաւորական ժողովէն բխած ուղեցոյցի բանաձեւի իրագործումը յաջողութեամբ պսակեց:

## Շրջանային Վարչութեան Ծրագիրներ

- Գովէճի եւ համալսարանի ուսանողներու կրթաթոշակի ծրագիր
- Հայկական վարժարաններու յատկացումներ
- Սրտէ Սիրտ
- Հորիզոն շաբաթաթերթի (Մանկապատանեկանի) յատկացում
- Սուրիահայ երէխաներու նպաստ
- ՀՕՄ-ի ննջեցեալներու եւ բարերարներու հոգեհանգիստ
- Տեղեկատու(Newsletter)
- Սեմինար

- Միջ-վարչական ժողով
- Կայքէջ(website)
- Անդամական շտեմարան(Database)
- Դիմատետր, Instagrag,
- «Կանչ»հաղորդում(Podcast)
- Լրատու
- Կրթանպաստ ծրագիր
- Լիբանան

## ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

### Գործունեություն

Վարչությունս երկամեայ այս շրջանին, 26-րդ Պատգամաւորական ժողովէն բխած մասնաճիւղերը գործուղելու հետ առնչուած քանաձեւերը յատուկ շրջաբերականներով փոխանցեց վարչութեանց եւ մօտէն հետեւեցաւ անոնց իրագործման գործընթացին:

Ինչպէս միշտ, անցնող տարեշրջանին եւս մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերին Գանատահայ գաղութի ձեռնարկներուն:

Կազմակերպեցին ճաշկերոյթներ, խրախճանքներ, դաստիարակչական դասախօսական երեկոներ, սօնավաճառներ, փոքր վաճառքներ, քայլարշաւներ, աւանդական բնոյթով ընկերային հաւաքոյթներ եւ այլ ձեռնարկներ, որոնց հասոյթով կրցան նիւթական յատկացումներ կատարել իրենց շրջաններու հայ, թէ օտար կազմակերպութիւններուն, գաղութի կրթական օճախներուն, Հայ Կեդրոններուն, քոյր միութիւններուն եւ մանաւա՛նդ ձեռք երկարեցին սփիւոքահայութեան եւ հայրենիքին:

Փոխադարձ այցելութիւններով քաջալերեցին զիրար, սօնական օրերու կամ յատուկ ձեռնարկներու առթիւ:

Միասնաբար գումարեցին ժողովներ, Կադանդի հաւաքոյթ, ՀՕՄ-ի օր եւ Կանանց Միջազգային Օր:

Մասնաճիւղերու վարչութիւնները մեծ մասամբ իրենց հերթական ժողովները գումարեցին շաբաթական դրութեամբ, իսկ անդամական ժողովները՝ ամսական դրութեամբ:

Մասնաճիւղերը իրենց տեղական բարոյական եւ նիւթական պարտաւորութիւններու կողքին իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարեցին Շրջանային վարչութեան: Օժանդակեցին նաեւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ծրագիրներուն եւ ի պահանջեալ հարկին անմիջապէս իրենց մասնակցութիւնը բերին սփիւռքի եւ հայրենիքի հրատապ կարիքներուն:

### ԱՆԴԱՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Մասնաճիւղ	Անդամական Պատկեր					Անդամներ 31-05-2025	Ժողովներ	
	Անդամներ 1-06-2023	Նոր անդամ	Մասնաճիւղին փոխանցուած	Մասնաճիւղէն փոխանցուած	Մահացած/ այլապէս նուազած		Անդամական	Վարչական
Համիլթըն «Արեւ»	27	2	0	0	5	24	10	20
Գեմպրիճ «Մեղրի»	51	7	0	3	4	51	13	34
Օթթաուա «Սեւան»	42	0	0	0	0	42	2	2
Միսիսոկա «Առագաստ»	15	0	0	0	1	13	2	4
Սէնթ Գաթրինզ «Արագ»	17	0	1	0	1	17	6	11
Ուինձըր «Ռուբինա»	8	0	0	0	0	8	6	4
Լաւալ «Շուշի»	222	16	11	0	8	241	17	63
Վանգուվըր «Արագ»	58	2	0	0	1	59	7	11
Թորոնթօ «Ռուբինա»	399	16	2	1	14	402	9	50
Մոնթրէալ «Սօւէ»	409	14	0	0	13	410	8	34

ԸՆԴՀԱՆՈՒՐ	1248	57	14	4	47	1267	80	233
-----------	------	----	----	---	----	------	----	-----

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

## Մեմինար

26-րդ պատգամաւորական ժողովի բանաձեւի դաստիարակչական թիւ մէկի առ ի գործադրութիւն, վարչութիւնս կազմակերպեց սեմինար մը, զոր տեղի ունեցաւ 22-23 Յունիս, 2024-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահէն ներս:

Մեմինարի առաջին օրուան դասախօսն էր՝ տիկ . Լորի Հարպոյեան, որ ներկայացուց «Հայ Մանուկի լեզուական զարգացումը մեր սփիւռքի բազմալեզու իրականութեան մէջ» նիւթը: Այս դասախօսութիւնը ամբողջութեամբ կարելի է լսել «Կանչ»-ի YOUTUBE-ի ալիքէն <https://youtu.be/FK2tte8oWTw>):

Օրուան երկրորդ դասախօսն էր ընկի. Նաթալի Կեօքչէնեան, որ ներկայացուց **The Well Spoken Women** գիրքը:

Մեմինարին երկրորդ օրուան յայտագիրը կ'ընդգրկէր երկու աշխատանոցներ: Առաջինը՝ «Տոկունութիւն եւ Արիութիւն», զոր ներկայացուցին ընկերուհիներ՝ Ալիք Ֆարրա-Գիրեշեան եւ Յասմիկ Ծառուկեան:

Երկրորդ աշխատանոցն էր «Ներառութիւն եւ պատկանելիութիւն» նիւթը, զոր ներկայացուց ընկի. Անի Հոթոյեան-Ժոլի:

## ԿՐԹԱԿԱՆ

### Շրջանային Վարչութեան Կրթաթոշակ

Վարչութիւնս ինչպէս ամէն տարի \$17,000 յատկացուց 12 համալսարանական եւ 5 գոլէճի աշակերտներու, իւրաքանչիւրին տրամադրելով \$1,000:

2023-2024 տարեշրջանին համալսարանի կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

Անի Աստուր	Թորոնթօ
Դանիէլ Այիք	Թորոնթօ
Լորի Պերպերեան	Թորոնթօ
Շանթ Տեօքմէճեան	Թորոնթօ
Դէնի Ճուրեան	Լաւալ
Թալին Խաշընձեան	Լաւալ
Զարեհ Մարգարեան	Թորոնթօ
Վարազ Մեսրոպեան	Թորոնթօ
Ալէք Օլթաչի	Մոնթրէալ
Նատիա Սիուֆի	Լաւալ
Արիանէ Թաւաքեան	Մոնթրէալ
Թալին Երեմեան	Թորոնթօ

2023-2024 տարեշրջանի Գոլէճի կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

Դրօ Պալիոզեան	Մոնթրէալ
Ալիք Աւետիսեան	Լաւալ
Լոռի Մարտիրոսեան	Մոնթրէալ
Արամ Ունանեան	Մոնթրէալ
Սերլի Ահարոնեան	Մոնթրէալ

2024-2025 տարեշրջանին համալսարանի կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

Տեսիլ Մէլէքեան	Մոնթրէալ
Գառնի Գոչարեան	Վանգուվըր
Սուրէն Ղազարեան	Վանգուվըր
Լոռիկ Գորաճեան	Վանգուվըր
Նանոր Գարկոճեան	Թորոնթօ
Վարազ Մեսրոպեան	Թորոնթօ
Ալիք Մակարեան	Թորոնթօ
Ռուբէն Օհանեան	Թորոնթօ
Թալին Երեմեան	Թորոնթօ
Անոյշ Արթինեան	Թորոնթօ
Արիանա Օգաճեան	Մէնթ Գաթրինգ
Վանա Չափարեան	Գէմպրիճ

2024-2025 տարեշրջանին գոլէճի կրթաթոշակ ստացան հետեւեալ աշակերտները:

Եսենիա Քէլէյեան	Լաւալ
Լոռի Օլթաճի	Մոնթրէալ
Իզապէլ Գոյումճեան	Մոնթրէալ
Մելիսա Ճապրայեան	Մոնթրէալ

Կրթաթոշակ ստացողները իրենց վճատագրերը ստացան մասնաճիղերու անդամական ժողովներուն կամ միացեալ ժողովներուն ձեռամբ վարչութեանս ատենապետին կամ վարչական ընկերուհիներուն:

### **Կրթական Օճախներ Եւ Բացառիկ Ցատկացումներ**

Երկամեայ տարեշրջանին վարչութիւնս կատարեց իր տարեկան նիւթական օժանդակութիւնները կրթական հաստատութիւններուն, ամենօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններուն, ամառնային ճամբարներուն, ծաղկոցներուն եւ մանկամտօրներուն:

Առ ի գործադրութիւն նիւթականի տակ բանաձեւ թիւ 7-ին, վարչութիւնս կրկնապատկեց ամառնային ճամբարներու նիւթական յատկացումը:

Հաւատալով մեր երկու ամենօրեայ դպրոցներու տեսլականին եւ զօրակցելու համար հայ դպրոցի առաքելութեան, եւ յատկապէս նկատելով անոնց առկայ բարեկարգման նոր ծրագիրները, շրջանային վարչութիւնս որոշեց բացառիկ նուիրատութիւն մը կատարել Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանին եւ Թորոնթոյի ՀՕՄ-ի Լափոյեան Երկրորդական վարժարանին, իւրաքանչիւրին նուիրելով \$25,000 :

## Շրջանային Վարչութեան Մրցանակներ

### «Կամաւորի Մրցանակ»

2023-2024 տարեշրջանին, վարչութիւնս շարունակեց ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան «Կամաւորի Մրցանակ»-ի տուչութիւնը: Սոյն մրցանակը կը շնորհուի Գանատայի հայկական ամենօրեայ վարժարաններու երկրորդական բաժնի աւարտական դասարանի այն աշակերտին, որ օրինակելի կամաւոր աշխատանք կը ցուցաբերէ դպրոցէն ներս եւ ունի ղեկավարելու յատկութիւններ:

2024-ին Մոնթրէալի Սուրբ Յակոբ վարժարանի երկրորդական կարգէն «Կամաւորի մրցանակ» ստացաւ՝ Նայիրի Ժուզագէլեան, իսկ Թորոնթոյի ՀՕՄ-ի Լափոյեան Երկրորդական վարժարանէն՝ Ռիթա Թիթիգեան, Սամանթա Նուշիկ Թօմարչի, Թէնի Մուշեան եւ Օշին Մարգարեան:

2025-ին, Մոնթրէալի Սուրբ Յակոբ վարժարանի երկրորդական կարգէն «Կամաւորի մրցանակ» ստացաւ Դալար Բաբախեան, իսկ ՀՕՄ-ի Թորոնթոյի Լափոյեան Երկրորդական վարժարանէն՝ Ժանօ Տոնոյեան:

### «Ծաղկի՛ր Հայերէն» Մրցանակ

2023 թուականին ՀՕՄ-ի Գանատայի Շրջանը իր 26-րդ Պատգամաւորական ժողովին հաստատեց «Ծաղկի՛ր հայերէն» մրցանակը:

Սոյն մրցանակը կը շնորհուի նախակրթարանի երեք աշակերտներու, որոնք հայերէն լեզուի հանդէպ բացառիկ բժախնդրութիւն կը ցուցաբերեն՝ մաքուր հայերէն կը խօսին եւ կը գրեն: Հետեւաբար, առաջին անգամ ըլլալով, 2024 թ., Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանէն «Ծաղկի՛ր Հայերէն» մրցանակին տիրացան երեք աշակերտներ՝ Ակնոր Արթիւր, Մաթիօ Թուխմանեան եւ Արին Թուրիկեան:

2025 թուականին ՀՕՄ-ի Թորոնթոյի Գոլուեան նախակրթարանէն «Ծաղկի՛ր հայերէն» մրցանակը ստացան՝ Կարօտ Փէլթէքեան, Մաքսիմ Յակոբ Ասմարեան եւ Թերեզա Պէրպէրեան:

2025 թուականին Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանէն «Ծաղկի՛ր Հայերէն» մրցանակին տիրացան երեք աշակերտներ՝ Տեսիլ Մկրտիչեան, Պենճամըն Գաւուքճեան եւ Գէորգ Եսայեան:

# ՔԱՐՈՉՉԱԿԱՆ

## Հարգացրոյցներ

Անցնող շրջանին վարչութիւնս մեծ կարեւորութիւն տուաւ քարոզչական աշխատանքին զարկ տալով իր գործունէութեան եւ առկայ ծրագիրներուն կամ հանգանակութիւններուն քարոզչութեան, հայ մամուլի, ընկերային հարթակներու, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի կայաններու միջոցաւ:

Վարչութեանս աստենապետուհի՝ ընկհ.Լուսին Փալանճեան բազմաթիւ հարցազրոյցներու հրաւերներու ընդառաջեց, որոնք զետեղուեցան թերթերուն, մեր դիմատետրին եւ կայքէջին մէջ:

Հարցազրոյցներու կողքին, վարչութիւնս հաղորդագրութիւններով եւ կոչերով հանդէս եկաւ իր ծրագիրներուն եւ յատուկ հանգանակային արշաւներուն մասին անդրադառնալու, ինչպէս նաեւ զանազան առիթներով արտայայտուեցաւ կամ իր սրտի խօսքը արտասանեց միութենական գործունէութեանց, ազգային, ընկերային ու ժողովրդային տօնախմբութիւններու ընթացքին:

## Հորիզոն

Հորիզոնի հետ մեր ունեցած սերտ համագործակցութիւնը շարունակուեցաւ:

Ինչպէս միշտ այս տարի եւս «Լրատու»-ի հրատարակութիւնը վստահուեցաւ Հորիզոնի անձնակազմին, յանձինս՝ «Հորիզոն»-ի աշխատակից տիկ.Սոնա Թիթիգեանի:

Բոլոր մասնաճիւղերը կատարեցին «Հորիզոն Մանկապատանեկան» յաւելուածի իրենց տարեկան յատկացումները: 2023-2025 տարեշրջանին համար, «Հորիզոն»

շաբաթաթերթին փոխանցեցինք **\$34,500.00** (ներառեալ 2023-ի Լրատուի ծախսերը):

## «Կանչ» Հաղորդում

2022-էն ի վեր ստեղծուած «Կանչ» հաղորդման ծրագիրը կ'ընդգրկէ դաստիարակչական եւ քարոզչական նիւթեր: Աշխատանքը կը տարուի ընկ.Արեգ Գուշեանի սիրայօժար մասնակցութեամբ: Նիւթերու պատրաստութեան եւ հրատարակութեան պատասխանատուն է ընկհ.Լուսին Փալանճեան: Կարելի է «Կանչ» հաղորդման հետեւիլ զանազան ընկերային հարթակներու, յատկապէս դիմատետրի, **Apple Podcasts**-ի, **Spotify**-ի կամ **YouTube**-ի միջոցաւ: Տեղին է յիշել, որ անոր հիմնական կապն է՝ [linktr.ee/arscanada](https://linktr.ee/arscanada): Այս կապը կը գտնուի մեր կայքէջին վրայ:

Անցնող երկամեակին մեր նիւթերը ընդգրկեցին ութ դասախօսութիւններ, չորս տեղեկատուական նիւթեր, 16 խորհրդածութիւններ կամ սրտի խօսքեր վերջինս արտասանուած ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 35-ամեակի առթիւ:

## Լրատու

«Լրատու»ն կը հանդիսանայ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի քարոզչական միջոցներէն մէկը, ուր կ'արտացոլայ Շրջանային վարչութեան եւ իր տասը մասնաճիւղերուն բեղուն գործունէութիւնը: Ինչպէս գիտէք, ան կը հրապարակուի երկամեայ դրութեամբ:

Առ ի գործադրութիւն նիւթականի տակ բանաձեւ թիւ մէկին, այս տարի Լրատուն կրկին անգամ լոյս տեսաւ իբրեւ ներդիր «Հորիզոն» շաբաթաթերթին մէջ: Կարելի է տեսնել անոր թուայնացած տարբերակը մեր կայքէջին վրայ:

## Տեղեկատու (Newsletter)

Շրջանային վարչութեան Տեղեկատուն պարբերաբար պատրաստուեցաւ եւ ուղարկուեցաւ մեր անդամներուն, վարչութեանս կամ մասնաճիւղերու գործունէութիւնը ցոլացնելու նպատակաւ, ուր տեղադրուեցան ձեռնարկներու թղթակցութիւններ, հաղորդագրութիւններ, նկարներ, յայտարարութիւններ, կրթաթոշակ ստացողներ, հանգանակութեան կոչեր, կազմակերպական, բարեսիրական եւ այլ գործունէութեանց մասին տեղեկութիւններ, լայն տեղ տալով նաեւ Կեդրոնական վարչութեան իրագործումներուն եւ ապագայի ծրագիրներուն: Պարբերաթերթի աշխատանքը ստանձնեց ընկհ. Մարալ Միսիրեան:

Հոկտեմբեր 2023-էն մինչեւ Մայիս, 2025 լոյս տեսած են 41 թիւեր:

## Կայքէջ

Վարչութիւնս շարունակեց գործակցիլ **Imagine Multimedia** ընկերութեան սեփականակատեր Պրն. Մամ Գալուստեանի հետ, կայքէջի վերաբերեալ հարցերը եւ հարկ եղած պարագային նորութիւնները ներմուծելու համար:

Ընկհ.Անի Գրալեան կը մնայ մեր կայքէջի նիւթերու թարմացման աշխատանքի պատասխանատուն:

Վարչական կապերն են՝ ընկհ.Մարալ Միսիրեան եւ ընկհ. Լուսին Փալանճեան:

## Դիմատետր (Facebook) - Instagram - Youtube – Tiktok

Տրուած ըլլալով, որ դիմատետրն ու **Instagram**-ը արդիական միջոցներ են Հայ Օգնութեան Միութեան գործունէութիւնը եւ անոր նպատակի ու առաքելութեան քարոզչութիւնը կատարելու, վարչութիւնս յատուկ ուշադրութիւն դարձուց եւ լրջօրէն հետեւեցաւ հոն զետեղուած բոլոր նիւթերուն, պահելու համար բարձր որակ եւ ՀՕՄ-ի վայել մակարդակ: Հոն լայն տեղ տրուեցան Կեդրոնական վարչութեան, Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու առօրեայ ծրագիրներու յայտարարութիւններուն եւ իրագործումներուն: Դիմատետրի հարթակէն մեծապէս օգտուեցաւ Շրջանային Վարչութիւնս, յատկապէս Արցախահայութեան եւ Միջին Արեւելքի օժանդակութեան առթիւ կազմակերպուած հանգանակութիւններու ծանուցումները կատարելու համար:

Իւրաքանչիւր մասնաճիւղ ունի դիմատետրի իր ներկայացուցիչը նորութիւններ զետեղելու կամ բաժնեկցելու, առաւել յայտարարութիւններ տարածելու:

Շրջանային վարչութեան **YouTUBE**-ի ալիքը, վարչութեանս կողմէ յաճախակիօրէն թարմացուեցաւ: Հոն զետեղուեցան զանազան հեռատեսիլի կայաններու հետ սփռուած

տեղեկատուական մեր բոլոր հարցազրույցներու տեսերիզները եւ «Կանչ»ի հաղորդումներու շարքը: **TikTok**-ը ծառայեց նաեւ որոշ յայտարարութիւններ տառածելու:

Այս աշխատանքներուն պատասխանատուն էր ընկի. Լուսին Փալանճեան:

## **Հանդիպում պատանիներու եւ դպրոցականներու հետ**

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 35-ամեակի մրցանակներու առթիւ երկու հանդիպումներ կազմակերպուեցաւ առաջինը՝ ՀՅԴ ԳՊՄ անդամներու եւ վարչութեան անդամներու հետ, իսկ երկրորդը՝ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի երկրորդական բաժնի աշակերտներուն հետ: Հանդիպումները ունեցան իրենց դրական ազդեցութիւնը եւ հետաքրքրութիւն արթնցուցին պատանիներու մօտ մեր կառոյցին, առաքելութեան եւ գործունէութեան նկատմամբ:

## **Յատուկ Ձեռնարկ**

Առ ի գործադրութիւն ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 26-րդ Պատգամաւորական ժողովի քարոզչական բանաձեւ թիւ 2-ի Շրջանային վարչութիւնս յանձն առաւ բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Յիշատակութեան արժանի հայ բժշկուհիներ պատմութեան ընթացքին» գիրքին մեկենասութիւնը:

21 Մարտ 2024-ին, Սոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» սրահէն ներս տեղի ունեցաւ գիրքին շնորհանդէսը: Բժիշկ Կարպիս Հարպոյեան գիրքը ձօնած էր ՀՕՄ-ի Գանատայի Շրջանին, եւ անոր ներածականին մէջ յիշած էր դրդապատճառը. «Նկատի ունենալով, որ հատորը կը խօսի հայ իգական սեռի առաքելութեան եւ հայ բժշկուհիներու կատարած առողջապահական-բժշկական ծառայութիւններուն եւ հայ կեանքէն ներս անոնց ունեցած ազգային եւ հասարակական դերակատարութեան մասին»:

«Դէմքեր» թատերախումբը հանդէս եկաւ բժիշկ Հարպոյեանի գիրքէն քաղուած պատմութեան ընթացքին հայ կնոջ եւ հայ բժշկուհիներուն մասին եղած վկայութիւններու ներկայացումով, բեմադրիչ ընկի.Նանսի Իսսա Թորոսեանի բեմադրութեամբ: Ապա, տեղի ունեցաւ հրապարակային սրտբաց զրոյց մը, հեղինակին եւ զրուցավար Տիկ.Սոնա Թիթիգեանի մասնակցութեամբ:

## **ՀՕՄ-Ի Գանատայի Շրջանի 35-Ամեակի Առթիւ Յատուկ Մրցանակներ**

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 26-րդ Պատգամաւորական ժողովի քարոզչականի տակ բանաձեւ 1-ի տրամադրութեան համաձայն, ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 35-ամեակի առթիւ երեք մրցանակներ հաստատուեցան, որոնց նպատակն էր ՀՕՄ-ի քարոզչական աշխատանքի ճամբով հայ երիտասարդին եւ պատանիին մօտ արուեստի եւ ստեղծագործութեան հորիզոնները ընդարձակել, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի քարոզչական աշխատանք կատարել:

Առաջին մրցումը - գծագրական մրցում, նիւթ՝ «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» կարգախօսով:

Երկրորդ մրցում - տեսերիզի մրցում, նիւթ՝ հայ լեզու եւ հայ մշակոյթ:

Երրորդ մրցում - տեսերիզի մրցում, նիւթ՝ ՀՕՄ-ի առաքելութիւն, անցեալի ու ներկայի գործունէութիւն:

Այս մրցումներու յայտարարութիւնները հանրութեան ուշադրութեան յանձնուեցան գրեթէ ամբողջ տարի մը սկսեալ Ապրիլ 2024-էն մինչեւ Ապրիլ 2025:

Այս առթիւ վարչութիւնս յառաջացուց աշխատանքներու գնահատման յանձնախումբ մը բաղկացած արուեստի ուսուցիչներէ եւ մասնագէտներէ:

## **Մրցման Արդիւնքներ**

Գծագրական մրցման չափահասներու խմբակէն օրդ.Նուշիկ Գատեան (Մոնթրէալէն) առաջինը կը հանդիսանայ:

Գծագրական մրցման անչափահասներու խմբակէն օրդ.Լիլիթ Ադամեան (Մոնթրէալէն) առաջինը կը հանդիսանայ:

Տեսանիւթի մրցման ՀՅԴ Մոնթրէալի «Դրօ» եւ Լաւալի «Գետաշէն» պատանեկան միութիւնները առաջինը կը հանդիսանան:

Մրցանակի արժանացողները իրենց պարգէներն ու գնահատագիրը ստացան ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 35-ամեակի պաշտօնական ձեռնարկին ընթացքին, 28 Յունիս, 2025-ին:

## **«Արցախ» Մրցանակ**

Վարչութիւնս հաստատեց «Արցախ» մրցանակը, գնահատելու համար անուանի գանատահայ մը, որ մեծ դեր ունեցած է գանատահայութեան եւ ընդհանրապէս աշխարհի տարածքին, մշակութային, տնտեսական, գիտական, պատմական, բարեսիրական կամ այլ ոլորտներու մէջ: Մոյն մրցանակին արժանացան՝ **Ընկհ. Դոկտ. Իզապէլ Գաբրիէլեան Չըրչըրը** իր պատմամշակութային եւ գիտական լուրջ աշխատութիւններով հայ ազգին եւ մարդկութեան ծառայած ըլլալուն առթիւ եւ **Ընկհ. Շաքէ Կէօնճեանը**՝ իբրեւ ազգային բարերար, գոր իր կատարած առատաձեռն նուիրաբերումներով ու շարունակական աջակցութեամբ կը հասնի Գանատայի, Սփիւռքի եւ հայրենիքի կարիքներուն:

Մրցանակին տուոչութիւնը տեղի ունեցաւ յոբելինական ճաշկերոյթին ընթացքին, 28 Յունիս, 2025-ին:

## **ՏՆՏԵՍԱԿԱՆ**

### **Եկամուտի Աղբիւրներ**

#### **Տարետուրք**

Մասնաճիւղերը կատարած են իրենց տարետուրքերու վճարումները:

#### **Կրթանպաստ**

Երիտասարդներէ բաղկացած «Կրթանպաստի յանձնախումբ» մը կազմուեցաւ նպաստելու համար մեր կրթաթոշակի ծրագիրին յաւելեալ նիւթական աղբիւրներ ապահովելու նպատակով:

27 Նոյեմբեր, 2024-ին, կրթաթոշակի ի նպաստ մշակութային բնոյթով ձեռնարկ մը կազմակերպուեցաւ, ուր «Զուլալ» եռեակը (յատկապէս հրաւիրուած Ամերիկայէն) իր հայկական հմայիչ երգերով անմոռանալի համերգ մը ներկայացուց:

29 Նոյեմբեր, 2025-ին, կրթական ծրագիրներու ի նպաստ Թորոնթոյի մէջ ալ կայացաւ ուշագրաւ ձեռնարկ մը՝ Cheese and Wine-ի երեկոյ, Թորոնթոյի Հայ կեդրոնէն ներս: Վերոյիշեալ զոյգ ձեռնարկներէն զոյացաւ մօտաւորապէս \$15,000: Ելոյթի բարոյական եւ նիւթական յաջողութիւնը նոր եռանդ եւ հպարտութիւն ներշնչեց յանձնախումբի անդամներուն: Յիշենք նաեւ, որ այս առիթով նախկին շրջանաւարտներ ընկերային հարթակներու վրայ հանդէս եկան դրամահաւաքի սրտաբուխ կոչերով եւ տեսանիւթերով, որոնք դիտուեցան աւելի քան 23,000 անձերու կողմէ:

### Սրտէ-Սիրտ

«Սրտէ Սիրտ» խմբակցութեան նպատակն է վարչութեանս տարեկան նիւթական յատկացումները ապահովել մեր կրթական օճախներուն: Այս երկամեայ տարեշրջանին, սոյն խմբակցութիւնը կը բաղկանայ 78 անդամներէ: Այս ծրագրին մաս կը կազմեն նաեւ շրջանիս 10 մասնաճիւղերը: Մասնակցութեան սակն է տարեկան առնուազն \$100:

### Այլ Աղբիւրներ

2023-2025 տարեշրջանին զանազան առիթներով, մեր ընկերուհիներու կատարած կամաւոր աշխատանքին եւ Շրջանային Վարչութեան ու ազգայիններու ջանքերուն շնորհիւ, ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները օտար կազմակերպութիւններէ եւ ընկերութիւններէ:

CN Employees	\$1,783
Facebook Paypal	\$9,858.67
Gulu Thadani Fondation	\$25,000
BENEVITY/ CN Rail / American Express Company / Google / Hydro one / Intact Insurance / Manulife / Microsoft / RBC / Sagen / Salsforce / Scotiabank / Sunlife Financial / Telus / Tomson Reuters	\$42,274.32
Congregation Notre Dame	\$15,000
UWGT	\$355.38
United Way Centre Aid	\$5,348.52
CAF	\$333.34
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ</b>	<b>\$99,953.23</b>

## **Հիմնադրամներ Եւ Կտակներ**

2023 - 2025 տարեշրջանին Տիկ.Անի Տեմիրճեանի կտակէն ստացուած գումարը աւելցուցինք իր կողմէ հիմնուած հիմնադրամին վրայ:

### **Անձեռնմխելի Հիմնադրամներ**

1. ՀՕՄ-ի Հիմնադրամ (ներառեալ Բրուտեան հիմնադրամ)
2. Տէր եւ Տիկին Նուպար Ճէտուրեան
3. Նայիրի Պօղոսեան-Նազարեան
4. Գրիգոր եւ Ռազմուհի Շահինեան
5. Ծովակ Խաչերեան
6. Պօղոս եւ Մարի Սահակեան
7. Վարուժան Պասթաճեան
8. Տիգրանուհի Արթինեան
9. Արսէն Օհանեան
10. Արմէնուհի Փիլիկեան
11. Մաննիկ Տայլերեան
12. Թէօլինտա Կարապետեան
13. Նորա Կէօնճեան
14. Պօղոս Քէլեան Լինթեան
15. Յարութիւն Եսայեան
16. Անի Տեմիրճեան
17. Վանուհի Իսաջանեան

## **ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

### **ՀՕՄ-ի Մնայուն Ծրագիրներ**

1. Ջաւախքի կրթական եւ մշակութային ծրագիր
2. «Զոհուած հերոսներու զաւակներ» (նախապէս Որբախնամ ծրագիր)
3. «Որբերու ուսման ծրագիր» (Ուսանող ծրագիր)
4. Լաւագոյն ուսանող ծրագիր
5. Ախուրեանի «Մօր ու մանկան առողջապահական կեդրոն-ծննդատուն»
6. ՀՕՄ-ի կրթաթոշակ
7. ՀՕՄ-ի նաւապտոյտ
8. Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն (ՄԱԿ)
9. Ամանոր ծրագիր

### **Բացառիկ Ծրագիրներ**

- 1-Վերելք ծրագիր
- 2-«Յոյսի օճախներ» ծրագիր

### **Անմիջական Օժանդակութիւններ**

- 1-Արցախահայություն
- 2- Լիբանանահայություն
- 3- Սուրիահայություն

## **Յարաբերական**

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչության հետ մեր յարաբերությունները եղած են միշտ սերտ: Ընթացք տուած ենք Կեդրոնական վարչության յղած շրջաբերականներուն, նամակներուն եւ յուշանօթերուն, եւ ի պահանջեալ հարկին զանոնք փոխանցած ենք մեր մասնաճիւղերուն եւ անդամներուն:

2023-2025 տարեշրջանի մեր նիւթաբարոյական գործունէութեան բոլոր տուեալները անյապաղ յղած ենք Կեդրոնական վարչության:

2023-2025 տարեշրջանին Կեդրոնական վարչութեան հրաւերով Գանատայի Շրջանային վարչութիւնս երկու առցանց միջ-վարչական եւ զեկուցական հանդիպումներու ներկայ գտնուած է, որուն մասնակցած են ՀՕՄ-ի այլ միաւորներու վարչութիւններ:

## **ՀՕՄ-ի 115-Ամեակ**

ՀՕՄ-ի 115-ամեակի առթիւ ընդառաջելով ԿՎ առաջարկին, վարչութիւնս Գանատայի Շրջանի 2010-2025-ի գործունէութեան ամփոփ տեղեկագիրը պատրաստեց հայերէն եւ անգլերէն լեզուներով եւ յղեց ԿՎ: Սոյն տեղեկագիրը պիտի հրատարակուի ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան 115 ամեակին առթիւ պատրաստուած՝ «Հայ Սիրտ» պարբերաթերթին բացառիկ թիւին մէջ:

ՀՕՄ-ի ԿՎ 115-ամեակի առթիւ տեղի ունեցած դրամահաւաքին մասնակցելով «Հայ Սիրտ»-ի բացառիկ հրատարակութեան համար վարչութիւնս \$10,000 ամ. նուիրեց: Դարձեալ 115-ամեակին առթիւ 10 վայրկեան տեւողութեամբ տեսանիւթ մը պատրաստուեցաւ Գանատայի շրջանի 2010-2025 տարիներու գործունէութեան շուրջ:

## **ՀՕՄ-ի «Ձոհուած Հերոսներու Չաւակներ» Ծրագիր**

Նախկին ՀՕՄ-ի ԿՎ «Որբախնամ Ծրագիր»-ը 2020-ի Արցախեան 2-րդ պատերազմէն ետք վերանուանուեցաւ «Ձոհուած Հերոսներու Չաւակներ» ծրագիր:

19 Սեպտեմբեր, 2023-ի իրադարձութիւններու պատճառով, նոր մանուկներ աւելցան ՉՀԶ ցանկին վրայ, որոնց շուտով ձեռք երկարեց մեր շրջանը:

Ուրախ ենք յայտնելու, որ 2024 թուականէն սկսեալ Գանատայի Շրջանային վարչութիւնը ազգային բարերարներ Պրն. Կարօ եւ իր տիկնոջ՝ ընկհ.Անի Տոնոյեանի նուիրատուութեան շնորհիւ, **50** զոհուած հերոսներու Չաւակներու խնամակալութիւնը ապահոված են:

Ուրախ ենք յայտնելու նաեւ, որ Շրջանային վարչութիւնս ընկհ. Շաքէ Կեօնճեանի մանչ թոռնիկով մը բախտաւորուելուն առթիւ ստացուած նուիրատուութեան շնորհիւ, մէկ

տարուան համար կը հովանաւորէ 18 տարեկան 20 արցախցի պատանիներ, որոնք երբեք  
 օժանդակութիւն չեն ստացած այս ծրագրէն:

**Ընդհանուր պատկեր**

<b>Հովանաւորուած որբերու ընդհանուր պատկեր</b>		
2023-2024	223 որբ	52 ուսանող
2024-2025	359 (որբ ներառեալ 50 նոր երեխաները)	49 ուսանող

Կարելոր է նշել այստեղ, թէ 2025-էն սկսեալ որբերու խնամակալութեան գումարը 450 գ.  
 տողարէն (330 ամ. տողարը կը մնայ նոյնը) բարձրացած է 500 գանատական տողարի,  
 գանատական շուկայի մէջ ամերիկեան տողարի սակագինի բարձրացման պատճառով:

**«Որբերու Ուսման» Ծրագիր**

ՀՕՄ-ի Որբերու Ուսման ծրագիրը հաստատուած է 2008-ին: Ծրագիրը կը հոգայ 18  
 տարիքը լրացուցած եւ երկրորդական վարժարան աւարտած որբերու  
 համալսարանական ուսման ծախսերէն բաժին մը:

Կրկին նշենք այստեղ, որ ուսանող որբերու հովանաւորութեան գումարը կը մնայ \$330  
 ամերիկեան տողար: Սակայն, գանատական տողարով վճարելու պարագային գումարը  
 \$500 տողարի բարձրացած է, գանատական շուկայի մէջ ամերիկեան տողարի սակագինի  
 բարձրացման պատճառով:

**ՀՕՄ-ի «Լաւագոյն Ուսանող» Ծրագիր**

Կեդրոնական վարչութեան կողմէ, 1995-ին հաստատուած այս ծրագրին նպատակն է  
 Հայաստանցի, Արցախցի եւ Ջաւախքցի բարձրագոյն նիշեր ապահովող իւրաքանչիւր  
 ուսանողի փոխանցել \$100 ԱՄՆ. Գանատայի շրջանը այս ծրագրին համար  
 Կեդրոնական վարչութեան փոխանցեց \$2,000:

**ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ-ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ**

**Արցախի Ընտանիքներու Օժանդակութիւն**

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը «Արցախի ընտանիքներու  
 օժանդակութեան» համագանատական մակարդակով՝ միջ-միութենական Միացեալ  
 Մարմին մը յառաջացուց, բաղկացած՝ ՀՅԴ Կեդր. Կոմիտէի, տեղական  
 կոմիտէութիւններու, ՀՕՄ-ի 10 մասնաճիւղերու, ՀՄԸՄ-ի, Համագայինի, ԳԵՄ-ի,  
 ներկայացուցիչներէ:

27 Հոկտեմբեր, 2023-ին, Միացեալ Մարմինը ունեցաւ իր առաջին առցանց ժողովը,  
 ատենապետ ընտրելով ընկերուհիներ՝ Անի Օհանեանի (Քէպէք) եւ Վարդուկ  
 Պարտազճեանի (Օնթարիօ), իսկ քարտուղար՝ ընկհ. Նաթալի Մանուկեան:

Չորս առցանց ժողովներէ ետք, 12 Յունուար, 2024-ին մարմինը ունեցաւ իր եզրափակիչ առցանց ժողովը:

Առաջին հերթին սոյն մարմինը անսակարկ նուիրումով, լայնածաւալ հանգանակային արշաւ ծրագրեց օգնութեան ձեռք երկարելու տեղահանուած ու տնտեսական ծանր պայմաններ ապրող Արցախցիին:

Հանգանակութեան թիրախն էր՝ **\$500,000**: Սակայն, քանի մը ամիսէն հաւաքուած գումարը եղաւ աւելի քան կէս միլիոն:

Դրամահաւաքի ընթացքին նշանակուած թիրախին հասնելու նպատակով՝ Միացեալ Մարմինի կողքին ենթայանձնախումբ մը կազմուեցաւ առցանց աճուրդի մը աշխատանքները կատարելու: Սոյն յանձնախումբը գործեց վարչութեանս կողքին, որուն ատենապետութիւնը ստանձնեց ընկի. Սիլվի Մերճանեան: Աճուրդը տեղի ունեցաւ 3 Դեկտեմբեր, 2023-ին:

Առցանց աճուրդի ենթայանձնախումբը հետեւողական եւ բժախնդիր աշխատանքով կրցաւ հանագանակել **\$43,285.44**:

Սոյն դրամահաւաքին իրենց մասնակցութիւնը բերին ՀՕՄ-ի Գանատայի 10 մասնաճիւղերը **\$10,000** նուիրելով:

## Միջին Արեւելքի Հայութեան Օժանդակութիւն

Լիբանանի եւ Սուրիոյ մէջ տիրող տնտեսական եւ քաղաքական անկայուն իրավիճակին մէջ ապրող մեր հարազատ քոյրերուն եւ եղբայրներուն աջակցելու համար, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնս ՀՅԴ Գանատայի կեդրոնական կոմիտէի հետ գործակցաբար կազմեց յանձնախումբ մը՝ «Միջին Արեւելքի հանգանակային միացեալ մարմին» անունով, որ կը ներառէր Գանատայի ազգային առաջնորդարանը, Համազգայինի Գանատայի շրջանային վարչութիւնը, ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանային վարչութիւնը, ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութիւնը եւ ՀՅԴ ԳՊՄ-ի ընդհանուր վարիչ մարմինը: Նոյեմբերի վերջաւորութեան ստեղծուած այս մարմինը շուտով անցաւ դրամահաւաքի արշաւի:

Արդէն վարչութիւնս նոյեմբեր 2024-ին **\$20,000 ԱՄՆ**. ղրկած էր ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան՝ թէ ու թիկունք կանգնելու Լիբանանի հայ համայնքին: Երբ Սուրիոյ անակնկալ իշխանափոխութեան եւ քաղաքական անկայուն իրավիճակը ի յայտ եկաւ, վարչութիւնս Դեկտեմբեր 2024-ին, **\$20,000 ԱՄՆ**. եւս ղրկեց լիբանանահայ եւ սուրիահայ մեր հայրենակիցներուն:

Անգամ մը եւս 2025 թուականին, վարչութիւնս կոկիկ գումար մը հաւաքելով կրցաւ օգնութեան հասնիլ Միջին Արեւելքի հայութեան, դրամահաւաքի ընդհանուր գումարը հասցնելով **\$85,000 ԱՄՆ**.:

## Յոյսի Օճախներ

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչությունը հայրենի սահմանամերձ գիւղերուն մէջ «Յոյսի Օճախներ» ծրագիր մը ստեղծեց, տուներ նորոգելու եւ յստակ պայմաններով յանձնելու զանոնք Արցախահայ բռնագաղթուած գիւղացի ընտանիքներուն: Այս ծրագիրը նպատակ ունի արցախահայ գիւղացին հայրենի հողին կառչած պահելու, որպէսզի ան չ'արտագաղթէ օտար երկիրներ:

2024-ին, «Յոյսի Օճախներ» ծրագիրին ընթացք տալով, վարչութիւնս Ախուրիկ գիւղի 2 բնակարաններու նորոգութիւնը յանձն առաւ, որպէսզի հարազատ երդիրով մը ապահովէ չորս արցախահայ ընտանիքներ:

«Յոյսի օճախներ» ծրագրին նուիրած ենք **\$60,000 ԱՄՆ.**, որուն **\$10,000 ԱՄՆ.** ստացած ենք Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղէն ի նպաստ այս ծրագրին:

### **Ախուրեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան Կեդրոն-Ծննդատուն**

2023-2025 տարեշրջանին, ինչպէս միշտ այս տարի եւս մեր մասնաճիւղերը իրենց նիրթական աջակցութիւնը բերին «Մօր ու Մանկան Առողջապահութեան Կեդրոն-Ծննդատան»: Զանազան առիթներով նաեւ ազգայիններ կամ մասնաճիւղեր իրենց նուիրատուութիւնը կատարեցին ի նպաստ այս կեդրոնի կարիքներուն:

Այսպէս օրինակ՝ ծնունդ առաւ Runners for Armenia նախաձեռնութիւնը, հովանաւորութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան եւ կազմակերպութեամբ երկու Մոնթրէալահայ երիտասարդներու՝ Շանթ Շահինեանի եւ Առէն Իմամէճեանի: 85 հոգիներէ բաղկացած Runners for Armenia խմբակը մասնակցեցաւ Մոնթրէալի մեծագոյն վազքի մրցումին, 20-22 Սեպտեմբեր, 2024-ին:

Ամիսներ առաջ սկսած այս աշխատանքն ու ծրագրումը յաջողած էին մէկտեղել հայ, թէ օտար 40 ընկերութիւններէ եւ 250 անհատներէ նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասաւ **\$62,000**: Գումարը ամբողջութեամբ յատկացուեցաւ ՀՕՄ-ի Հայաստանի Ախուրեանի «Մօր ու Մանկան Առողջապահութեան կեդրոն»-ին համար խիստ անհրաժեշտ mammography նոր բժշկական սարքի գնման, որուն ծախսերը շուրջ **\$300,000 ԱՄՆ.** է:

2023-2025 Շրջանային վարչութեանս Ախուրեանի «Մօր ու մանկան կեդրոն-ծննդատան» յատկացումը եղած է **\$57,000 ԱՄՆ.:**

### **Զաւախք**

Նկատի ունենալով, որ ՀՕՄ-ը կը հովանաւորէ Զաւախքի ՀՕՄ-ի գրասենեակները, Զաւախքի երեք երիտասարդական կեդրոնները եւ կը գործակցի Ախալքալաքի TUMO-ի կեդրոնին հետ, վարչութիւնս այս ծրագիրներուն համար յատկացուց **\$53,265 ԱՄՆ.:**

### **«Վերելք» Ծրագիր**

Արցախցի երիտասարդության համար աշխատանքի եւ մասնագիտանալու նոր դաշտեր բանալ միտող «Վերելք Արցախ» ծրագիրին կը մասնակցին 100 երիտասարդներ: Այս ծրագրի աւարտին 10 երիտասարդներ կը ստանան նիւթական աջակցութիւն: ՀՕՄ-ի ԿՎ կը հովանաւորէ սոյն ծրագիրը, որուն նպաստելու համար վարչութիւնս նուիրեց **\$10,000 ԱՄՆ.:**

### **«Ամանոր» Ծրագիր**

Նոր Տարուան առիթով կադանդչէք կը տրամադրուի հայրենիքէն ներս, թէ դուրս գործող եւ կարիքաւորներու ծառայող հիմնարկներու:

Այս նպատակով, այս տարի եւս վարչութիւնը իւրաքանչիւր անդամի համար **\$3 ԱՄՆ.** դրամահաւաքի պարտաւորութիւնը կատարեց եւ Կեդրոնական վարչութեան փոխանցեց **\$7600 ԱՄՆ.:**

### **Սուրիահայ Երեխաներու Կադանդչէք**

«Պնակ մը տաք ճաշ» ծրագիրը սկիզբ առած էր 2013-ին Սուրիոյ մէջ տեղի ունեցած քաղաքացիական պատերազմին պատճառով, աղքատութեան մէջ ընկճուող, սնունդի նուազագոյն չափանիշերը ապահովելու անկարող ընտանիքներուն լիարժէք սնունդ ապահովելու նպատակով, ինչպէս նաեւ աշխատանք հայթայթելու համար: Սոյն ծրագիրը Շաբաթը 3 օրուան դրութեամբ մօտաւորապէս 500 բաժին ճաշ կը տրամադրէ: Ծրագրին ծախսը կը կազմէ ամսական **\$3,000 ԱՄՆ.:**

Երկամեայ շրջանին վարչութիւնս «Պնակ մը տաք ճաշ» ծրագրին համար **\$3,000 ԱՄՆ.** ուղարկեց Սուրիահայութեան:

Այս շրջանին եւս Սուրիահայ երեխաներու Ամանորի կադանդչէքի ծրագրի իւրաքանչիւր անդամի 7 ԱՄՆ. յատկացումը կատարուեցաւ: Ուստի, **\$16,800 ԱՄՆ.** դրկուեցաւ աշակերտներու ձմեռնային բաճկոններու պատրաստութեան համար:

Սուրիահայութեան օժանդակութեան համար Սապունճի հաստատութիւնը (Օնթարիոյէն) **\$10,000 ԱՄՆ.** նուիրեց Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանին եւ **\$10,000 ԱՄՆ.** Ազգային պատսպարանին:

### **Լիբանանահայութեան Օժանդակութիւն**

Շրջանս միշտ ալ իր աջակցութիւնը բերած է Լիբանանի հայկական դպրոցներուն եւ ուսանողներուն, ինչպէս նաեւ տաք ճաշի մատուցման: 2023-ին, ՀՕՄ-ի Գանատայի 26-րդ Պատգամաւորական ժողովի նիւթական բաժնի բանաձեւ թիւ մէկի առ ի գործադրութիւն, վարչութիւնս Արցախի Սօսէ մանկապարտէզներու 2023-2025-ի գումարը յատկացուց Լիբանանի հայութեան օժանդակութեան:

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը 2023-2024 իրարայաջորդ տարիներուն նպաստեց Լիբանանահայութեան կարիքներուն նուիրելով **\$20,000 ԱՄՆ.**

## Յունաստան

Օգոստոս 2023-ին, վարչութիւնս ընդառաջելով ԿՎ առաջարկին, **\$5,000 ԱՄՆ.** նուիրեց Յունաստանի Խալքիտիքի ամառանոցի նորոգութեան դրամահաւաքին:

### Համահայկական 73-րդ ժողով

Հայ Օգնութեան Միութեան Համահայկական 73-րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 16-20 հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Սոյն պատկառելի ժողովին շրջանս մասնակցեցաւ չորս պատգամաւորներով եւ մէկ ներկայացուցիչով: Մեր շրջանի բոլոր պատգամաւորները ժողովի ընթացքին կարեւոր պաշտօններ ստանձնեցին եւ նկատառելի ներդրում ունեցան ժողովի ընթացքին:

Համահայկական 73-րդ Պատգամաւորական Ժողովի մասնակիցներ	
Վարչական Ներկայացուցիչ՝ Լուսին Փալանճեան	
Անի Օհանեան	Լաւալ
Արտա Շահինեան	Թորոնթօ
Յասմիկ Բաբիսեան	Թորոնթօ
Աննա Պուլկարեան	Մոնթրէալ

### Հայաստանագնացութիւն

115-ամեակի առթիւ յատուկ միջոցառումները տեղի պիտի ունենան 15-25 Հոկտեմբեր, 2025-ին: Վարչութիւնը կը քաջալերէ մեր ընկերուհիներն ու համակիրները մասնակցելու Հայաստանի մէջ կայանալիք ՀՕՄ-ի 115-ամեակի եզրափակիչ հանդիսութեան:

### ՀՕՄ-ի 9-րդ Նաւապտոյտ

ՀՕՄ-ի Միջազգային Նաւապտոյտը ԿՎ միակ հասութաբեր ձեռնարկն է, որ տեղի կ'ունենայ պարբերաբար 2 տարին անգամ մը:

Այս նաւապտոյտը կ'ընդգրկէ Ասիոյ ցամաքամասի տարբեր երկիրներու այցելութիւն, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ, 2026-ին:

### ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի 69-րդ Խորհրդաժողովներ

Նիւ Եորքի մէջ կայացաւ ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի խորհրդաժողովները:

Խորհրդաժողովները՝ «Գոյատեւում եւ ապաքինում. Կանանց դերը տազնապներու գօտիներուն եւ առողջապահութեան մարզին մէջ» խորագրով, տեղի ունեցան 12-21 Մարտ, 2025-ին, ՄԱԿ-ի կեդրոնէն ներս: Այս խորհրդաժողովներուն Գանատայէն հինգ ընկերուհիներ (4 Մոնթրէալէն, 1-ը Թորոնթոյէն) իրենց մասնակցութիւնը բերին:

## ՀՕՄ-ի Կրթաթոշակ

2023-2024 տարեշրջանին, Գանատայի շրջանէն հետեւեալ ուսանողները արժանացան ՀՕՄ-ի ԿՎ կրթաթոշակին՝ Թորոնթոյէն՝ Լոռի Պերպերեան, Էլէնա Սարգիսեան եւ Մոնթրէալէն՝ Միեր Մկրտիչեան:

Գանատայի շրջանէն, կրթաթոշակի յանձնախումբի անդամ նշանակուած էին Թորոնթոյէն ընկի. Անի Հասրըճեան Ճամպազեան եւ Մոնթրէալէն ընկի. Նուշիկ Էլոյեան:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարչութիւնս ի սրտէ շնորհակալութեան խօսք կ'ուղղէ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Բաբգէն Սրբ. Արք. Չարեանին, մեր հոգեւոր հայրերուն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, քոյր միութիւններուն, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին, «Հայ Հորիզոն» եւ «Նոր Հայ Հորիզոն» հեռատեսիլի կայաններու անձնակազմերուն, մեր բոլոր ծրագիրներու նուիրատուներուն եւ խնամակալներուն, Ազգային վարժարաններու տնօրէնութեանց եւ անձնակազմերուն, իրաւաբան Պրն. Հրանդ Նահապետեանին, տիկ. Սոնա Թիթիզեանին, ընկ. Արեգ Գուշեանին, պրն.Րաֆֆի Ստեփանեանին, պրն. Արմէն Ալէմեանին, ընկի. Մինթիա Սարգիսեանին, տիկ. Անժելա Կետիկեան Կիրիւնլեանին, պրն. Կարօ Նազարեանին, ընկի. Նայիրի Շահինեանին, ընկի. Անի Աբիքեանին, Ընկի. Արմինէ Մուքոյեանին, պրն.Վահագն Գարագաշեանին, պրն. Վազգէն Միսէնեանին, ընկի. Լիզա Թաշճեանին, ընկի. Ազգանուշ Հատիտեանին, ընկի. Սեդա Մանկասարեան Պալեոզեանին, եւ ՀՕՄ-ի համայն բարեկամներուն եւ բարերարներուն:

Գնահատանքի արժանի են ամուսնութեան, մկրտութեան, ծնունդներու, տարեդարձներու, փոխան ծաղկեպսակի եւ այլ ընտանեկան տօնախմբումներու առիթներով, անհատներու եւ ընտանիքներու կատարած նուիրատուութիւնները ՀՕՄ-ի ծրագիրներուն:

Յատուկ շնորհակալութեան խօսք ունինք նաեւ ընթացիկ տարեշրջանի Շրջանային վարչութեանս գործունէութեան ծրագրային եւ կազմակերպական աշխատանքներուն սատարող յանձնախումբերու անդամներուն, շրջանիս տասը մասնաճիւղերու վարչութիւններուն եւ մեր բոլոր անդամներուն, որոնք կը կազմեն մեր ազգանպաստ աշխատանքի ամենակարեւոր մասնիկները:



ՇՆՈՐՀԱԽՈՐ

ԱՄԵԱԿ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 35-ԱՄԵԱԿ



ՀՕՄ-Ի 115-